ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

# Նուբարաշենի աղբավայրի կենսաաղբի կիրառությունը էլեկտրաէներգիայի արտադրության նպատակով

*(Միջազգային ծրագիր):*

*Երևանի մերձակա Նուբարաշենի աղբավայրի կենսագազի (մեթան) կորզման համակարգը ունի 962մ3/ժ առավելագույն հոսքով կենսագազ հավաքելու հնարավորություն: Սա համարժեք է մոտ 436.5 մ3/ժ մեթանի հոսքի: Ներկայումս աղբավայրի կենսագազում առկա է մոտ 50% մեթանի պարունակություն: Դրա օգտակար յուրացման համար աղբավայրի մոտակայքում տեղակայել 1.06 ՄՎտ հզորությամբ գազագեներատոր, որը, սկսած 2019թ. կարող է արտադրել տարեկան մոտ 7.63 մլն կՎտժ էլեկտրական էներգիա: Ուստի, իրատեսական է Նուբարաշենի մեթանի կորզման ընդլայնված ծրագրից ակնկալվող արդյունքը, որի տարեկան աարտադրանքը գնահատվում է մոտ 43.092 հազար տոննա CO2 գազին համարժեք* ***ջերմոցային գազի արտանետման կանխարգելում*** *և մոտ 7.0 մլն կվտ/ժ էլեկտրական էներգիայի արտադրություն:*